Դաս 2. Համատեղ խորհրդակցելը

Դուք կարող եք ուսուցանել այս դասն ամբողջությամբ կամ բաժանել այն հատվածների: Հարմարեցրեք դասը տեղի պայմաններին և ձեր քվորումի կամ դասարանի նախագահության կարիքներին, տարիքին և հասկացողությանը:

ՀԱՄԱՏԵՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԵԼՆ ՈՒԺԻ ԱՂԲՅՈՒՐ Է:

Իր Եկեղեցին առաջնորդելու Տիրոջ ուղին խորհրդակցելն է (տես Վարդապետություն և Ուխտեր 43.8–10): Համատեղ խորհրդակցելը կարող է օգնել մեզ լինել միասնական որպես քվորումի կամ դասարանի նախագահություն, որոշումներ կայացնելիս առաջնորդվել Հոգով և ավելի արդյունավետ լինել Տիրոջ աշխատանքը կատարելիս: Ինչպե՞ս կարող է համատեղ խորհրդակցելն օգնել մեզ կայացնելու լավագույն որոշումները:

ՀԱՄԱՏԵՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԵԼԸ ԿԱՐՈՂ Է ՕԳՆԵԼ ՄԵԶ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼ

Երեց Նիլ Լ. Անդերսենն ուսուցանել է, որ «հայտնությունը ցրված է մեր մեջ» (“Auxiliary Panels Use New Training Library,” *Ensign,* Apr. 2011, 76): Խորհրդակցելը մեզ թույլ է տալիս հավաքել այդ հայտնությունը՝ մինչ մենք ծրագրում և իրականացնում ենք Տիրոջ աշխատանքը: Այս գաղափարը լուսաբանելու համար դուք կարող եք նախագահության յուրաքանչյուր անդամի տալ գլուխկոտրուկի մի մաս և հրավիրել նրանց աշխատել միասին ու հավաքել գլուխկոտրուկը:

- Այս օրինակն ինչպե՞ս է վերաբերում որպես նախագահություն խորհրդակցելուն:
- Խորհրդակցության ժամանակ ինչու՞ է կարևոր յուրաքանչյուրի ներդրումը:
- Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի յուրաքանչյուրը կարողանա ազատ մասնակցել:
- Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի համատեղ խորհրդակցության ընթացքում հրավիրենք և լսենք Սուրբ Հոգուն:

Մտածեք ձեր քվորումում կամ դասարանում առկա խնդրի կամ կարիքի մասին: Փորձեք համատեղ խորհրդակցել և գտնել լուծումներ:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ

- Մատթեոս 18.20
- Եթեր 2.14–3.16
- Վարդապետություն և Ուխտեր 88.122
- Վարդապետություն և Ուխտեր 107.84– 87
- M. Russell Ballard, “Strength in Counsel,” *Ensign*, Nov. 1993, 76–78
- *Ընդհանուր Ձեռնարկ. Ծառայել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում*, 10.4, 11.3.4, ChurchofJesusChrist.org

© 2020 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: 2/20: *Quorum and Class Presidency Training—Lesson 2* -ի թարգմանությունը: Armenian. PD60010737 201. Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում